«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«20» 12 2014թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____Հ. Թունյան

N ՍՑ-ԳԲԽ-07/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.06.2014թ. N 6.ՍԿ/13.1/8702-14 գրությամբ ներկայացված «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.06.2014թ. N 6.ՍԿ/13.1/8702-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝

Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.06.2014թ. N 6.ՍԿ/13.1/8702-14 գրությամբ Կենտրոն է ուղարկել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.06.2014թ. N 01/61-6090 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 12.06.2014թ. N 09/032-1067 գրությամբ դիմել է «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը Կենտրոն հասցեագրված 17.06.2014թ. գրությամբ հայտնել է, որ «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ն լիցենզավորման համար համապատասխան փաստաթղթերը ՀՀ քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» գործակալություն է ներկայացրել մինչև «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/39-1» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի կնքումը: Սակայն, նշված գործակալության կողմից «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ի փաթեթը լիցենզավորման հանձնաժողովին է ներկայացվել 31.05.2014թ. և այդ օրվանից էլ հանձնաժողովի կայացրած որոշմամբ «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ն համարվում է լիցենզավորված:

Վերոնշյալ գրությամբ Ընկերությունը խնդրել է ուշացված լիցենզավորումը համարել տեխնիկական և չկիրառել պատժամիջոցներ:

«Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում 04.12.2014թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած քննարկմանը, նույնպես հաստատեց, որ Երևանի քաղաքապետարանի հետ 07.04.2014թ.-ին, այսինքն՝ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/39-1» ծածկագրով կապալային աշխատանքների գնման այմանագիրը կնքելու դրությամբ Ընկերությունը լիցենզավորված չի եղել:

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն հասցեագրված 03.06.2014թ. N 01/61-6090 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ի միջև 07.04.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/39-1» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիր:

Վերը նշված ծածկագրով, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված գնման գործընթացին մասնակցելու շրջանակներում, Ընկերությունը հրավերի պահանջներին համապատասխան ներկայացրել է հայտարարություն (հավելված N 3)՝ բաց ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին:

Երևանի քաղաքապետարանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 87-րդ կետը, համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող (տրամադրվող) համապատասխան լիցենզիայի (լիցենզիաների) տրամադրման, ինչպես նաև կասեցված լինելու դեպքում՝ համապատասխան տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ (ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված համապատասխան ընկերությունների ցանկի):

Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի վերը նշված գրության, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը հայտնել է, որ ցանկում առկա «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ն ՀՀ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված չէ:

Վերոնշյալի հիմքով Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով, Կարգի 87-րդ և կնքված պայմանագրի 8.1-րդ կետերով, միակողմանի հրաժարվել է «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ի հետ 07.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/39-1» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրից և Ընկերության կողմից համապատասխան գրության ստացման փաստով վերջինիս հետ կնքված պայմանագիրը համարել է լուծված:

4. ՍՑ-ԳԲԽ-07/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 10.06.2014թ. N 6.ՍԿ/13.1/8702-14 գրությամբ ներկայացված «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Բ.Կանաչյանի անվան արվեստի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/39» ծածկագրով բաց ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետով սահմանվել է պահանջ, որ Երևան քաղաքի Բ.Կանաչյանի անվան արվեստի դպրոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար պահանջվում է լիցենզիա:

3. Ընկերությունը, ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, ներկայացրել է հայտարարություն՝ բաց ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիայի պահանջներին համապատասխանության մասին (Ընթացակարգի հրավերի հավելված 3):

4. Ընթացակարգի արդյունքում Երևանի քաղաքապետարանի և «Նոր վերածնունդ» ՍՊԸ-ի միջև 07.04.2014թ. կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-14/39-1 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

5. Պատվիրատուի 05.05.2014թ. N 01/61-4969 գրությամբ կատարած հարցմանը ՀՀ քաղաքաշինության նախարարությունը 15.05.2014թ. N 01/22.1/2229-14 գրությամբ հայտնել է, որ «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ն ՀՀ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված չէ:

6. Պատվիրատուն, ստանալով վերոնշյալ տեղեկությունը, Ընկերության՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման, այսինքն՝ հրավերով սահմանված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին ներկայացրած հայտարարությունը, գնահատել է որպես իրականությանը չհամապատասխանող տեղեկություն և, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, Կարգի 87-րդ և Պայմանագրի 8.1-րդ կետերը, Ընկերությանը հասցեագրված 02.06.2014թ. N 61/2644 գրությամբ միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված կապալային աշխատանքների գնման վերոնշյալ պայմանագրից, ինչի հետևանքով Պայմանագիրը համարվել է լուծված:

7. «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ն Պատվիրատուի 02.06.2014թ. N 61/2644 գրությունը ստացել է 05.06.2014թ:

5. ՍՑ-ԳԲԽ-07/14 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.06.2014թ. N 6.ՍԿ/13.1/8702-14 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ի 17.06.2014թ. գրությունը, Ընթացակարգի հրավերը, հրավերի թիվ 3 հավելվածով նախատեսված Ընկերության տված հայտարարությունը և լսելով Կենտրոնում կազմակերպված քննարկման

ժամանակ Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների կարծիքները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 87-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների համակարգողը և (կամ) գնահատող հանձնաժողովը կարող են ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում, համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա գնման գործընթացներին տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ մասնակցի հետ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պատվիրատուների կողմից միակողմանիորեն լուծվում են:

Պայմանագրի 8.1-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Կարգի 149-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Նկատի ունենալով, որ «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտարարություն՝ հրավերով սահմանված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, մինչդեռ վերոնշյալ հայտարարությունն իրականությանը չի համապատասխանել, քանի որ Ընկերությունը, մասնակցելով գնման գործընթացին, ՀՀ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա չի ունեցել, այսինքն՝ գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ, ինչը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն հիմք է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 10.06.2014թ. N 6.ՍԿ/13.1/8702-14 գրությամբ «Նոր Վերածնունդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-07/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մկրտչյան